

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայության 2017թ. ընթացքում
իրականացրած գործունեության վերաբերյալ**

ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայությունը բաղկացած է 13 տարածքային մարմիններից, որոնք գործում են Հայաստանի Հանրապետության մարզերում /թվով 10/ և Երևան քաղաքի համայնքներում /թվով 3/: Մարզային բաժանմունքներն ունեն 38 նստավայր:

Պրոբացիայի պետական ծառայությունն իրականացնում է ազատությունից զրկելու հետ չկապված քրեական պատիժներ՝ տուգանքը, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, հանրային աշխատանքները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում պատժից պայմանական վաղաժամկետ ազատված, պատիժը պայմանականորեն չկիրառված, հղի կանանց կամ մինչև 3 տարեկան երեխա ունեցող կամ այլ հիմքերով պատիժը հետաձգված անձանց նկատմամբ:

Ծառայությունում 2017թ.ի ընթացքում գրանցվել են հետևյալ քանակությամբ պատիժներ և վերահսկողություններ՝

	Պատիժների և վերահսկողությունների տեսակները և քանակները						
	Տուգանք	Որոշակի պաշտոններ	Հանրային աշխատանք	Պատիժը պայմ. չկիրառել	Պատժից պ/վ ազատել	Պատժի հետաձգում	Ընդամենը
2016թ. փոխանցված	1440	201	177	1116	62	9	3005
2017թ. ստացված	925	166	357	901	205	1	2555
Ընդամենը	2365	367	534	2017	267	10	5560

Ծառայությունում 2017թ. ընթացքում հաշվառվել է 5234 շահառու, որոնցից 535-ը կանայք են, իսկ 88-ը՝ անչափահաս, որից 4-ը աղջիկ: Նրանց նկատմամբ նշանակվել է 3266 պատիժ, 2294 վերահսկողություն:

Ծառայությունում 2017թ. 12 ամիսների ընթացքում արխիվացվել է 1758 անձնական գործ, ընթացքի մեջ է 3193 անձնական գործ, իսկ 4 անձնական գործ փոխանցվել է Արցախի Հանրապետության քրեակատարողական տեսչություն:

1. Տուգանք. 2365 տուգանքի ընդհանուր գումարը կազմում է 851.087.683 դրամ, որից փաստացի կատարվել է 727 տուգանք, փաստացի գանձված գումարը կազմում է 171.643.800 դրամ, իսկ մասնակի գանձվել է 65.060.866 դրամ: 781 տուգանք գտնվում է միջնորդություն ներկայացնելու 10 օրյա ժամկետի մեջ, որոնց գումարը կազմում է 301.184.484 դրամ, 265 տուգանք տարաժամկետված է, որոնց գումարի չվճարված մասը

կազմում է 78.838.200 դրամ, 229 տուգանքի կատարումը հետաձգվել է, որոնց չվճարված գումարը կազմում է 100.868.000 դրամ, 27 շահառուի մոտ տուգանքի կատարումը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստով /կալանավորվել են, ընդհանուր գումարը՝ 14.915.000 դրամ/, 106 տուգանք կարճվել է, որոնց չվճարված գումարը կազմում է 33.406.000 դրամ /14 մահ, 2 համաներում, 83 վաղեմություն, 7 օրենս. փոփ/:

Ծառայությունում փաստացի ընթացքի մեջ է 1277 տուգանք, որոնց գումարի չվճարված մասը կազմում է 483.321.350 դրամ:

2365 տուգանք պատժից 303-ը նշանակվել է կանանց, իսկ 7-ը՝ անչափահասների նկատմամբ:

2.Յանրային աշխատանքներ. Յաշվետու ժամանակաշրջանում հանրային աշխատանքների ձևով պատիժ է նշանակվել 534 շահառուի նկատմամբ. որից 272 անձնական գործ գտնվում է ընթացքի մեջ, որոնցից ներկայումս աշխատում են 167-ը, 52-ի վերաբերյալ կնքվում են պայմանագրեր, իսկ 54-ը՝ չեն աշխատում /18 հետախուզում, 24-ի վերաբերյալ ներկայացվել է պատիժը փոխարինելու միջնորդություն, 9 բողոքարկվել է վերաքննիչ դատարան, 1 հիվանդ, 2-ը հրաժարվել են աշխատել, իսկ պատիժը փոխարինելու միջնորդությունը մերժվել է, 2-ի պատիժը ընդհատված է/, 95 հանրային աշխատանքներ փաստացի կատարվել են, 119-ի պատիժը կասեցվել է /94-ը գտնվում են ազատագրկման մեջ, 1-ը գտնվում է զինվորական ծառայության մեջ /, 39-ի պատիժը կարճվել է /4 մահ, 1 նոր հանցանք, 2 համաներում, 28 դատարանի որոշմամբ, 2 կենսաթոշակային տարիք, 1 ծանր հիվանդությամբ, 1 օրենս. փոփոխ. /, 8 շահառուի պատիժը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստով /կալանավորվել են/, 1 դատապարտյալի նկատմամբ նշանակված հանրային աշխատանքները բաժանմունքի միջնորդության հիման վրա փոխարինվել են ազատագրկմամբ:

534 հանրային աշխատանքներ պատժատեսակից 25-ը նշանակվել է կանանց նկատմամբ:

Յանրային աշխատանքներ պատժատեսակի իրականացումն ապահովելու և այն առավել հանրօգուտ դարձնելու նպատակով Պրոբացիայի պետական ծառայության բաժինները համագործակցում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հետ, որոնց հետ կնքվում են պայմանագրեր, հետագա գործընթացի կազմակերպման նպատակով:

3. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատիժ կրող շահառուների թիվը կազմում է 367, որոնցից 239-ի գործերը գտնվում են ընթացքի մեջ, հաշվառումից

հանվել են 126 շահառու՝ պատիժը փաստացի կատարելու հիմքով, 2-ը կասեցված է դատարանի որոշմամբ, 1-ը՝ կարճվել է /մահ/:

367 որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատժից 22-ը նշանակվել են կանանց նկատմամբ:

367 որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատժից 287-ը վերաբերվում են տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելուն, իսկ 80-ը՝ այլ գործունեությունից:

4.Վերահսկողություններ.2017 շահառուի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, որոնցից ընթացքի մեջ են 1257-ը, 721-ի նկատմամբ սահմանված փորձաշրջանի ժամկետը փաստացի ավարտվել է, 16-ի փորձաշրջանը կարճվել է /2 դատվածության մարում, 8 նոր հանցանք, 6 մահ/, 15-ի նկատմամբ փորձաշրջանը դադարեցվել է նոր հանցանք կատարելու հիմքով /կալանավորվել են/, 8-ի փորձաշրջանը վերացվել է բաժանմունքի միջնորդության հիման վրա, 4 անձնական գործը փոխանցվել է Արցախի Հանրապետության քրեակատարողական տեսչություն:

2017 փորձաշրջանից 174-ը նշանակվել են կանանց, իսկ 77-ը՝ անչափահասների նկատմամբ:

Ծառայությունում հաշվառված 12 անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է կիրառվել է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց:

Փորձաշրջանի մեջ գտնվող 44 շահառու զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության:

Փորձաշրջանի մեջ գտնվող 41 շահառուի անձնական գործերը ստացվել են ՀՀ ՊՆ տարբեր զորամասերից:

Վերահսկողությունից խուսափող 40 դատապարտյալ գտնվում է հետախուզման մեջ:

Ազատագրկման ձևով պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատված դատապարտյալներից պրոբացիոն ծառայությունում, ըստ ստացված որոշումների, հաշվառվել են 267 շահառու, որոնցից 170-ի նկատմամբ վերահսկողությունն ընթացքի մեջ է, 91-ը՝ փաստացի ավարտվել է, իսկ 2-ի նկատմամբ՝ կարճվել է /1 նոր հանցանք, 1 մահ/, 2 դատապարտյալի նկատմամբ վերահսկողությունը դադարեցվել է նոր հանցանք կատարելու փաստի հիման վրա /կալանավորվել են/, 2 դատապարտյալի պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը վերացվել է տարածքային բաժնի միջնորդության հիման վրա:

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատվածներից 242-ը տղամարդ են, իսկ 25-ը կին:

Վերահսկողությունից խուսափող 5 դատապարտյալ գտնվում է հետախուզման մեջ:

Պրոբացիայի ծառայությունում հաշվառված են պատժի կրումը հետաձգված 10 շահառու, որոնցից 9-ի պատիժը հետաձգված է հիվանդության պատճառով, 1-ն ունի մինչև 3 տարեկան երեխա:

Հաշվառված 10 դատապարտյալից 6 տղամարդ են, իսկ 4-ը կին: